



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

06.12.2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/114

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից 22.11.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ -ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 22.11.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

Ընտրված մասնակիցը ներկայացրել է տեխնիկական բնութագիր, որտեղ նշված է սարքի հստակ մոդել (TRACE 1310, Thermo Scientific, ԱՄՆ): Սակայն առկա է հակասություն իր ներկայացրած և այդ մոդելի պաշտոնական տեխնիկական բնութագրերի միջև:

Այնինչ, այդ մոդելը չունի տեխնիկական այն հնարավորությունները, որոնք ներկայացրել է ընտրված մասնակիցը:

Արտադրող Thermo Scientific ընկերության պաշտոնական ցուցանիշներում (պաշտոնական կայք, պաշտոնական բրոշյուր) ներկայացված են՝ գազերի հոսքը 0-500մլ/ր օդի համար, և ազոտի համար 0-50մլ/ր, այնինչ ընտրված մասնակիցը ներկայացնում է 0-800մլ/ր և 0-100մլ/ր, այսինքն, ներկայացնում է արտադրված մոդելից ավելի բարձր հնարավորություններով անհայտ մոդել:

Այս սարքում օգտագործում են ինչպես օդ, այնպես էլ ջրածին գազ, որոնց խառնուրդը կարող է հանգեցնել պայթյունի, ինչն էլ կարող է խաթարել անձնակազմի առողջության անվտանգությունը:

Հաջորդ խախտումը տվյալների գրանցման արագությունն է, ըստ որի անհրաժեշտ է լինի մինչև 500 Հg, այնինչ TRACE 1310 մոդելը հնարավորություն ունի ապահովելու մինչև 300 Հg արագություն: Ընտրված մասնակիցը կրկին ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող տվյալ՝ 300 Հg-ի փոխարեն 500 Հg, ինչը արտադրող ընկերությունը չի կարող ապահովել:

Հաշվի առնելով վերը նշված էական պայմանները, Ձեր ուշադրությունն ենք ուզում հրավիրել այն հանգամանքին, որ ընտրված մասնակիցը ներկայացրել է ակնհայտ կեղծ տեխնիկական տվյալներ: Նշված TRACE 1310 մոդելը, չի կարող ապահովել ընտրված մասնակցի կողմից նշված ցուցանիշները:

Ինչպես նաև, TRACE 1310 սարքը ունի համապատասխան որակի միջազգային սերտիֆիկատներ և համապատասխանում է մի շարք միջազգային ստանդարտներին, ապա սարքի վրա կատարված ցանկացած ծրագրային և/կամ ապարատային՝ ոչ գործարանային, փոփոխություն կբերի այդ սերտիֆիկատների ու ստանդարտների խախտման, ուստի դրանից հետո չի կարելի ասել, որ սարքը համապատասխանում է արտադրողի կողմից նշված սերտիֆիկատներին ու ստանդարտներին:

Մրցույթի ձեռքբերման առարկա հանդիսացող գազային քրոմատագիրը իրենից ներկայացնում է դատաբժշկական փորձարկումների կատարման համար նախատեսված սարք (արյան մեջ ալկոհոլի նվազագույն քանակը որոշելու, թմրանյութերի նվազագույն քանակների որոշումը կենսաբանական նմուշներում, այսինքն՝ արյուն, շիճուկ, մեզ, թուրք, մազ և այլ թունաբանական փորձաքննությունների համար):

Նմանօրինակ սարքերը, սարքավորումները ենթակա են «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից պետական գրանցման, որն ապահովում է օբյեկտիվ տվյալներ այն մասին, որ չափման միջոցը բավարարում է սահմանված պահանջները, սակայն նման սարք դեռևս չի գրանցվել նշված լիազոր մարմնի կողմից, հետևաբար, այդ սարքի

կիրառությունը Հայաստանի Հանրապետությունում թույլատրելի չէ առանց լիազոր մարմնի համապատասխան տեսակի հաստատման և գրանցման:

Հետևաբար առանց չափման միջոցների փորձարկման, դրական արդյունքների գրանցման կառաջանան անվտանգության նորմերի խախտում, արդյունքների անճշտություն և այլն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքը քննող անձին խնդրում եմ.

Պարտավորեցնել ՀՀ ԱՆ «Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «բժշկական սարքերի» ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՀԱՊՁԲ-15/16-2018-3-ԴԲԳԳԿ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել.

1. 27.10.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ՝ «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը,

2. 13.11.2018թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը բավարար գնահատելու և վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը,

3. «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության ներկայացուցիչներ Արմինե Բատիկյանը, Գայանե Խաչվանկյանը և Բելլա Թադևոսյանը:

2. ՀՀ ԱՆ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

ՀՀ ԱՆ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից 22.11.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 27.11.2018թ. թիվ 15/1-393 գրությամբ հայտնել է հետևյալը.

««ԳՀԱՊՁԲ-15/16-2018-3-ԴԲԳԳԿ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների հայտերը ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատավել են պահպանելով գնումների մասին ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգով սահմանված պահանջները:

«ԳՀԱՊՁԲ-15/16-2018-3-ԴԲԳԳԿ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնով պահանջվող «Գազային քրոմատոգրաֆ» ապրանքատեսակի մասով հայտ են ներկայացրել թվով երեք մասնակից, որոնցից «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն զբաղեցրել է երրորդ տեղը /գնային առաջարկն առանց ԱԱՀ՝ 19,160,000 ՀՀ դրամ/, իսկ վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկը առանց ավելացված արժեքի հարկի գերազանցում է առաջին տեղ, և հետագայում ընտրված մասնակից՝ «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի /17,450,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ/ կողմից ներկայացված գնային առաջարկը՝ 1,710,000 ՀՀ դրամ գումարի չափով:

Բողոքը քննող անձին ներկայացված բողոքի առաջին մասով «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն պահանջել է պարտավորեցնել «ԳՀԱՊՁԲ-15/16-2018-3-ԴԲԳԳԿ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 27.10.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ՝ «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը:

Որպես բողոքի փաստացի և իրավական հիմք բողոքարկող անձը ներկայացրել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի հրավերով սահմանված պահանջներին մի շարք անհամապատասխանությունների վերաբերյալ իր դիրքորոշումը:

Բողոքի առաջին մասով ներկայացված պահանջը անհասկանալի է և անհիմն, քանի որ մասնակցի կողմից տեխնիկական բնութագիրը ներկայացվում է վերջինիս առաջին տեղ զբաղեցրած մասնակցից ճանաչելուց հետո:

«ԳՀԱՊՁԲ-15/16-2018-3-ԴԲԳԳԿ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.10.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության թիվ 2 որոշմամբ «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցի, ինչի հիմքը ներկայացված նվազագույն գնային առաջարկն է: Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի որակավորման փաստաթղթերը, տվյալ պարագայում՝ տեխնիկական բնութագիրը, հանձնաժողովի քարտուղարի կողմից պահանջվել են 29.10.2018թ., իսկ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացվել են 31.10.2018թ.:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Բողոքը քննող անձին ներկայացված բողոքի երկրորդ մասով «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն պահանջել է պարտավորեցնել «ԳՀԱՊՁԲ-15/16-2018-3-ԴԲԳԳԿ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 13.11.2018թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված՝ «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը բավարար գնահատելու և վերջինիս ընտրված մասնակցից ճանաչելու մասին որոշումը:

Վերոնշյալով պայմանավորված հայտնում ենք Ձեզ, որ «ԳՀԱՊՁԲ-15/16-2018-3-ԴԲԳԳԿ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է գնման առարկայի առաջարկվող տեխնիկական բնութագիրը: Ներկայացված տեխնիկական բնութագիրը ամբողջությամբ բավարարում է հրավերով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագրին: Հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված բոլոր չափորոշիչները համապատասխանում են, իսկ որոշ չափորոշիչների դեպքում նույնիսկ գերազանցում են սահմանված նվազագույն պահանջները:

Բողոքարկող անձը որպես բողոքի հիմնավորում չի առարկում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի փաստացի ներկայացրած տեխնիկական բնութագրի համապատասխանությունը, այլ փորձում է ստիպել Պատվիրատույին հիմք չընդունել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի

կողմից ներկայացված որակավորման փաստաթուղթը և հիմք ընդունել համացանցային տվյալները:

Յուրաքանչյուր գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրում ներառվում է գնման առարկայի այն տեխնիկական բնութագիրը, որը ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար /Օրենքի 13-րդ հոդված/, իսկ գնման առարկան գնման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման կողմից ընդունվում է, եթե մատակարարվող գնման առարկայի տեխնիկական բնութագիրը ամբողջովին համապատասխանում է պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին: Հակառակ դեպքում գնման առարկան չի ընդունվում:

Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝

1) նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ:

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից տեխնիկական բնութագրով ներկայացված ապրանքատեսակը համապատասխանում է ՀՀ ԱՆ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքներին, որոնք սահմանվել են հրավերով:

«ԳՀԱՊՁԲ-15/16-2018-3-ԴԲԳԳԿ» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի հետ գնման պայմանագրի կնքումը կհանդիսանա գնումների տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառության (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Բողոքը ներկայացրած անձը նշում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող (TRACE 1310, Thermo Scientific, ԱՄՆ) սարքի տեխնիկական բնութագիրը

հակասում է այդ մոդելի պաշտոնական կայքում տեղադրված տեխնիկական բնութագրին: Բողոքը ներկայացրած անձը որպես սարքի պաշտոնական տեխնիկական բնութագիր հիմք է ընդունում համացանցում որոնված արտադրողի կայքի տվյալ արտադրանքի տեխնիկական բնութագիրը:

Տվյալ պարագայում «ԳՀԱՊՁԲ-15/16-2018-3-ԴԲԳԳԿ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք է ընդունել մասնակցի ներկայացված տեխնիկական բնութագրի ամբողջական համապատասխանությունը հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին: Գնահատող հանձնաժողովը, որպես բողոքը ներկայացրած անձի կողմից ներկայացված փաստ, կարող է հիմք ընդունել միայն արտադրող՝ Thermo Scientific, ԱՄՆ ընկերության պաշտոնական գրությունը:

Սույն թվականի նոյեմբերի 13-ին տեղի է ունեցել «ԳՀԱՊՁԲ-15/16-2018-3-ԴԲԳԳԿ» ծածկագրով գնման ընթացակարգի ամփոփիչ նիստը: Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից 1-ին չափաբաժնի համար ներկայացված տեխնիկական բնութագիրը: Նշեմ, որ այն լիովին համապատասխանում է հրավերով սահմանված տեխնիկական պահանջներին: «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից բացի տեխնիկական տվյալներից, ներկայացվել է նաև գնման առարկայի ապրանքային նշանը և արտադրողի անվանումը՝ (TRACE 1310, Thermo Scientific, ԱՄՆ): Ստորև աղյուսակում ներկայացված են «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի այն չափորոշիչները, որոնք տարբերվում են հրավերով սահմանված տեխնիկական չափորոշիչներից և դրանց գնահատման պատկերը, ինչպես նաև բողոքի առարկա դարձած չափորոշիչների համեմատականը: Աղյուսակում չներառված այլ չափարոշիչները ամբողջովին նույն են հրավերով սահմանված չափորոշիչների հետ համեմատելիս:

Հրավերով սահմանված տեխնիկական բնութագիր	«Իմմունոֆարմ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիր	Գնահատման արդյունք
<p>Համակարգի հնարավորությունները Երկուխորշիկ</p> <ul style="list-style-type: none"> 6-ից ավելի ԷՊՀ-ի տեղադրելու հնարավորություն և ավելի քան 16 ալիքի վերահսկողություն 	<p>Համակարգի հնարավորությունները Երկուխորշիկ</p> <ul style="list-style-type: none"> 6-ից ավելի ԷՊՀ-ի տեղադրելու հնարավորություն և ավելի քան 18 ալիքի վերահսկողություն 	<p>Բավարար, գերազանցում է սահմանված պահանջը</p>

<p>Աշտարակի վառարանը</p> <ul style="list-style-type: none"> • Աշխատանքային ջերմաստիճանը - +4-ից ÷ 450 °C • LN2 սառեցումով -80 ÷ 450 °C • CO2 սառեցումով -40 ÷ 450 °C 	<p>Աշտարակի վառարանը</p> <ul style="list-style-type: none"> • Աշխատանքային ջերմաստիճանը - +3-ից ÷ 450 °C • LN2 սառեցումով - 100 ÷ 450 °C • CO2 սառեցումով - 50 ÷ 450 °C 	<p>Բավարար, գերազանցում է սահմանված պահանջը</p>
<p>Աջակցում է ջեռոցում 20 տաքացման ծրագիր, 21 հարթակներով:</p>	<p>Աջակցում է ջեռոցում 32 տաքացման ծրագիր, 33 հարթակներով:</p>	<p>Բավարար, գերազանցում է սահմանված պահանջը</p>
<p>Split/splitless համակարգ</p> <ul style="list-style-type: none"> • Split-ի տիրույթը – ավելի քան 7500:1 	<p>Split/splitless համակարգ</p> <ul style="list-style-type: none"> • Split-ի տիրույթը – ավելի քան 12500:1 	<p>Բավարար, գերազանցում է սահմանված պահանջը</p>
<p>Մազանոթային հոսքի տեխնոլոգիայիների հնարավորություն Ավտոմատացված հեղուկային նմուշարկիչ Ավտոմատացված հեղուկային նմուշարկիչի տարողունակությունը՝ 50 հատ 2 մլ ծավալով վիալ նմուշների համար</p>	<p>Մազանոթային հոսքի տեխնոլոգիայիների հնարավորություն Ավտոմատացված հեղուկային նմուշարկիչ Ավտոմատացված հեղուկային նմուշարկիչի տարողունակությունը՝ 155 հատ 2 մլ ծավալով վիալ նմուշների համար</p>	<p>Բավարար, գերազանցում է սահմանված պահանջը</p>
<p>Ներարկչի չափ՝ 1, 2, 5, 10, 25, 50, կամ 100 մկլ առավելագույն ծավալ ստանդարտ կոմպլեկտացիայով</p>	<p>Ներարկչի չափ՝ 0,5, 1, 2, 5, 10, 25, 50, կամ 100 մկլ առավելագույն ծավալ ստանդարտ կոմպլեկտացիայով</p>	<p>Բավարար, գերազանցում է սահմանված պահանջը</p>
<p>ԲՈՂՈՔԻ ԱՌԱՐԿԱ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ</p>		
<p>Բոցա-իոնային դետեկտոր(FID)</p> <ul style="list-style-type: none"> • Մինչև 500 Հg տվյալների գրանցման արագություն • Ստանդարտ էլեկտրոնային պնեվմատիկ դեկավարում երեք գազի համար՝ Օդ – 0-ից 800 մլ/րոպե Ջրածին - 0-ից 100 մլ/րոպե 	<p>Բոցա-իոնային դետեկտոր(FID)</p> <ul style="list-style-type: none"> • Մինչև 500 Հg տվյալների գրանցման արագություն • Ստանդարտ էլեկտրոնային պնեվմատիկ դեկավարում երեք գազի համար՝ Օդ – 0-ից 800 մլ/րոպե Ջրածին - 0-ից 100 մլ/րոպե 	<p>Բավարար, համապատասխանում է սահմանված պահանջներին</p>

Հայտերի գնահատման փուլում, հիմք ընդունելով երրորդ տեղ զբաղեցրած մասնակից՝ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի բանավոր հայտարարությունը առաջին տեղ զբաղեցնող մասնակցի ներկայացրած տեխնիկական բնութագրի հնարավոր անհամապատասխանության մասին, «ԳՀԱՊՁԲ-15/16-2018-3-ԴԲԳԳԿ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը դիմել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ հայտնելով երրորդ տեղ զբաղեցրած մասնակցի մտավախությունը, որին ի պատասխան առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ընթացակարգի գնահատող հանձնաժողովին է ներակայացվել առաջարկվող սարքը արտադրող՝ Thermo Scientific, ԱՄՆ կազմակերպության Ռուսաստանում, ինչպես նաև մեր տարածաշրջանում պաշտոնական ներկայացուցիչ հանդիսացող՝ «МС АНАЛИТИКА» ընկերության գրությունը: Գրությամբ նշվում է, որ առաջարկվող՝ «TRACE 1310, Thermo Scientific» ապրանքատեսակը կարող է արտադրվել ինչպես պաշտոնական կայքում տեղադրված չափորոշիչներով, այնպես էլ «ԳՀԱՊՁԲ-15/16-2018-3-ԴԲԳԳԿ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի չափորոշիչներով: Ի դեպ, նշեմ, որ «МС АНАЛИТИКА» ընկերության «Thermo Scientific, ԱՄՆ» կազմակերպության պաշտոնական ներկայացուցիչ լինելու փաստը ֆիքսված է նույն պաշտոնական կայքում:

Համաձայն Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, 5-րդ և 6-րդ կետերի՝

1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է նույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Տվյալ մասնակցի հայտը մերժելը կոնտրակտի իբրև գնումների օրենսդրության կոպիտ խախտում և մասնակցի շահերի ոտնահարում և ինչու ոչ, նաև Պատվիրատուի՝ քանի որ ընտրված մասնակցի կողմից 1-ին չափաբաժնի մասով՝ «գազային քրոմատոգրաֆ» ապրանքատեսակի միավորի գինը կազմում է՝ 17,450,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, իսկ բողոքարկող կողմի ներկայացված միավորի գինը կազմում է՝ 19,160,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ:

Հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը, գնահատող հանձնաժողովի 13.11.2018թ. նիստի թիվ 2 որոշմամբ «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Ի պատասխան «Կոնցեռն-էներգոմաշ» ՓԲԸ-ի մտահոգությանը, հայտնում ենք, որ մասնակցի հետ պայմանագիր կնքելիս գնման առարկայի նկարագրությունը սահմանվում է հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական տվյալները: Գնման առարկայի մատակարարման ժամանակ անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում մատակարարին տրվում է սահմանված ժամկետում անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն: Անհամապատասխանությունը չշտկելու դեպքում պայմանագիրը լուծվում է, և մասնակցի տվյալները ներկայացվում են ՀՀ ֆինանսների նախարարություն:

Լրցաուցիչ տեղեկատվություն.

Սույն ընթացակարգը իրականացվում է գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա: «ԳՀԱՊՁԲ-15/16-2018-3-ԴԲԳԳԿ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված գնման առարկայի ֆինանսավորումը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից առողջապահության նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը դրամաշնորհ տրամադրելու եղանակով: Սույն թվականի նոյեմբերի 22-ի ՀՀ կառավարության նիստի օրակարգի թիվ 3 որոշմամբ հաստատվել է կառավարության պահուստային ֆոնդից առողջապահության նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը 2018թ. դրամաշնորհի տրամադրման որոշումը, որը ուժի մեջ կմտնի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Տրամադարվող ֆինանսական

միջոցները համարվում են 2018թ. ֆինանսական տարվա միջոցներ և պետք է նպատակային իրացվեն 2018 թվականին:

Հիմք ընդունելով վերոգրյալը, և հաշվի առնելով նույն ընթացակարգի շրջանակներում գնման առարկայի ձեռքբերման նպատակայինությունը և կարևավորությունը՝ խնդրում եմ Ձեզ, «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ կողմից ներկայացված բողոքը մերժել:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Ռուբեն Եգանյանը:

3. «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

ԳԲԽ-ԷՍ-2018/114 բողոքի քննության շրջանակներում որպես երրորդ անձ ներգրավված «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն 01.12.2018թ. գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է.

«ՀՀ ԱՆ «Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳՀԱՊՁԲ-15/16-2018-3-ԴԲԳԳԿ» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Վերոհիշյալ գնանշման հարցմամբ առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն, որի ներկայացրած տեխնիկական բնութագրում առաջարկվող սարքի մոդել է նշված՝ TRACE 1310, Thermo Scientific, ԱՄՆ:

Բողոքաբերի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է, որ.

1. Thermo Scientific ընկերության պաշտոնական ցուցանիշներում ներկայացված են գազերի հոսքը 0-500 մլ/ր օդի համար, և ազոտի համար 0-50մլ/ր., այնինչ ընտրված մասնակիցը ներկայացնում է 0-800 մլ/ր և 0-100մլ/ր, այսինքն, առաջարկվող մոդելից ավելի բարձր հնարավորություններ ունեցող մոդել:

2. TRACE 1310 մոդելի տվյալների գրանցման արագությունը հնարավորություն ունի ապահովելու մինչև 300 Հg, այնինչ պետք է անհրաժեշտ լիներ 500 Հg, այսինքն, ըստ բողոքաբերի, արտադրող ընկերությունը չի կարող ապահովել պահանջվող ցուցանիշները:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ իրոք, «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից առաջարկվող սարքի (TRACE 1310, Thermo Scientific, ԱՄՆ) պաշտոնական ցուցանիշներում (ըստ արտադրող ընկերության պաշտոնական կայքի տվյալների) գազերի հոսքը սահմանված է 0-500 մլ/ր օդի համար, և ազոտի համար 0-50մլ/ր

(Ընթացակարգի հրավերով պահանջվել է համապատասխանաբար՝ 0-800 մ/ր և 0-100մ/ր):
Բացի այդ, TRACE 1310 մոդելի տվյալների գրանցման արագությունը հնարավորություն ունի
ապահովելու մինչև 300 Հց (Ընթացակարգի հրավերով պահանջվել է մինչև 500 Հց):

Սակայն հայտնում ենք, որ Thermo Fisher Scientific ընկերության ԱՊՀ տարածաշրջանի
ներկայացուցիչ «ՄՍ-ԱՆԱԼԻՏԻԿԱ» ընկերությունը համապատասխան գրությամբ (կցվում է)
հայտնել է, որ «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող TRACE 1310, Thermo Scientific
սարքը ունի կոնստրուկտիվ հնարավորություն ապահովել ընթացակարգի հրավերով
պահանջված պարամետրերը:

Միննույն ժամանակ, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ
հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-
րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն
ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից
տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված
փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին
ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում
հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու
դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է
առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա
ընթացքում շտկելա նհամապատասխանությունը:

Գտնում ենք, որ եթե «ԳՀԱՊԶԲ-15/16-2018-3-ԴԲԳԳԿ» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովը արձանագրեր «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող
TRACE 1310, Thermo Scientific սարքի տեխնիկական բնութագրում
անհամապատասխանություններ Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ և
ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի պահանջներով՝ հնարավորություն ընձեռներ շտկելու
Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված և ներկայացված
փաստաթուղթը (ապրանքի տեխնիկական բնութագիրը), ապա Ընկերությունը
հնարավորություն կստանար շտկելու ներկայացված տեխնիկական բնութագիրը և միգուցե,
ներկայացնել այլ մոդելի ապրանք, որը լիովին կհապատասխաներ Ընթացակարգի հրավերի
տեխնիկական բնութագրին:

Այս տեսանկյունից «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն չի առարկում, որպեսզի «Կոնցեռն-
էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից 22.11.2018թ.-ին ներկայացրած ԳԲԽ-ԷՍ-2018/114 ծածկագրով
բողոքը բավարարվի ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձի կողմից և

Ընթացակարգը վերադառնա ներկայացված փաստաթղթերի գնահատման փուլ, ինչը հնարավորություն կտա «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ին Կարգի 47-րդ կետի համաձայն՝ շտկել ներկայացված փաստաթղթում արձանագրված անհամապատասխանությունները»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի տնօրեն Խաչատուր Շաքարյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2018/114 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից 22.11.2018թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ ԱՆ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի Բողոքի վերաբերյալ Բողոքներ քննող անձին 27.11.2018թ. թիվ 15/1-393 գրությամբ հայտնած դիրքորշումը, Բողոքի քննության շրջանակներում որպես երրորդ անձ ներգրավված «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի 01.12.2018թ. գրությամբ հայտնած դիրքորշումը, «ԳՀԱՊՁԲ-15/16-2018-3-ԴԲԳԳԿ» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԳՀԱՊՁԲ-15/16-2018-3-ԴԲԳԳԿ» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 22.06.2018թ. նիստի թիվ 2, 13.07.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությունները.

ՀՀ ԱՆ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-15/16-2018-3-ԴԲԳԳԿ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): Ընթացակարգին մասնակցության հայտեր են ներկայացրել «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն և «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Մասնակից):

Ընթացակարգի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով «Գազային քրոմատագիր» ապրանքատեսակի մասով սահմանվել են հետևյալ հատկանիշները.

«Համակարգի հնարավորությունները.

Երկու խորշիկ՝

- Երեք դետեկտորի տեղադրելու հնարավորություն
- Չորս դետեկտորի ազդանշանների գրանցման հնարավորություն
- Էլեկտրոնային պնեվմատիկ հսկողություն(ԷՊՀ) բոլոր խորշիկներին դետեկտորների

համար

- Նմուշի հետ հավող բոլոր մակերեսների իներտություն ամբողջ հոսքագծի երկայնքով
- 6-ից ավելի էՊՀ-ի տեղադրելու հնարավորություն և ավելի քան 16 ալիքի

վերահսկողություն

- Ճնշման սահմանված առժեք – ± 0.001 psi, 0 – 150 psi ճնշման տիրույթներում

Աշտարակի վառարանը՝

- Աշխատանքային ջերմաստիճանը - $+4$ -ից $\div 450$ °C
- LN2 սառեցումով -80 $\div 450$ °C
- CO2 սառեցումով -40 $\div 450$ °C

Տարողունակությունը – մինչև 2 հատ 105 մ \times 0.530 մմ մազանոթային աշտարակ, կամ 2 հատ փաթեթավորված աշտարակ՝ ապակյա(10-ft, 9 in. coil diameter, 1/4 in. od) կամ չժանգոտվող պողպատից (20-ft, 1/8 in. od):

Պահման ժամանակի կրկնելիություն - 0.008% կամ 0.0008 րոպե

Մակերեսի վերարտադրողականություն - $< 1\%$ RSD

Ջերմաստիճանի կարգավորելու ճշտությունը - 0.1 °C

Աջակցում է ջեռոցում 20տաքացման ծրագիր, 21հարթակներով: Թույլատրելի են բացասական առժեքներ:

Ջեռոցի ջերմաստիճանի աճի առավելագույն առժեքը – 120 °C/րոպե

Առավելագույն անդաթար աշխատանքի ժամանակը մեկ 999.99 րոպե (կամ 16.7 ժամ)

Ջեռոցի սառեցման ժամանակը – 3.5 րոպեում 450°C-ից մինչև 50°C սառելու համար

Արտաքին ջերմաստիճանի անտեսման գործակիցը - < 0.01 °C ամեն 1 °C - ին.

Էլեկտրոնային պնևմատիկ հսկողություն՝

- Բարոմետրիկ ճնշման և սովորական ջերմաստիճանի կոմպենսացման

հնարավորություն

- Ճնշման տիրույթը – 0.000 – 150 psi

- Ճնշման միավորների հնարավորություն՝ psi, kPa կամ bar

- Ճնշման հարաբերությունը հոսքի ռամպերին – առավելագույնը 3

- Կրող գազի տեսակի ընտրման հնարավորություն – ջրածին, ազոտ, հելիում, արգոն-

մեթան խառնուրդ

- Հաստատուն հոսքի մոդուլի հնարավորություն

- Split/splitless multimode և PTV խորշիկները ունեն հոսքի սենսորներ, հարաբերության

հսկման համար

- Ճնշման ճշտությունը - $< \pm 2\%$ ամբողջ տիրույթի

- Վերարտադրողականությունը $< \pm 0.05$ psi
- Ջերմաստիճանային գործակիցը - $< \pm 0.001$ psi/°C
- Ճնշման շեղման տիրույթ - $< \pm 0.1$ psi/6 ամսում
- Դետեկտորների ճշտությունը $< \pm 3$ մլ/րոպե կամ 7%, վերարտադրողականությունը $< \pm 0.35\%$

- Հոսքի ճշտություն կախված կրող գազից - $< \pm 5\%$
- Հոսքի վերարտադրողականությունը - $< \pm 0.35\%$
- Հոսքի ջերմաստիճանային գործակիցը`

$< \pm 0.20$ մլ/րոպե He կամ H2 գազերի °C – ի համար

$< \pm 0.05$ մլ/րոպե N2 կամ Ar/CH4 գազերի °C – ի համար

Խորշիկներ

Տեղադրված երկու խորշիկ`

- Մթնոլորտային ճնշման և ջերմաստիճանի տատանման ԷՊՀ կոմպենսացիյա

Split/splitless համակարգ

- Split/splitless բոլոր մազանոթային աշտարակների համար(50-530μմ ներքին տրամագիծ)

- Split-ի տիրույթը – ավելի քան 7500:1

- Splitless մոդուլը մնացորդային փորձարկումների համար

- Առավելագույն ջերմաստիճանը – 450 °C

- ԷՊՀ-ի հոսքի առկայություն երկու ճնշման տիրույթների համար:

0-100 psig – 0.2մմ աշտարակների համար

0-150 psig - < 0.2 մմ աշտարակների համար

- Գազի խնայելու հնարավորություն: Sleep/Wake ռեժիմների առկայություն

- Հոսքի ընդհանուր տիրույթ - 0 - 200 մլ/ր - ազոտի համար,

0 - 1250 մլ/ր ջրածնի կամ հելիումի համար

- Ինժեկտորի լայների արագ և հեշտ փոխարինման հնարավորություն

Դետեկտորներ`

Դետեկտորները պետք է օժտված լինի բոլոր գազերի միացման/անջատման և պնեվմատիկ էլեկտրոնային ղեկավարումով` արտաքին մթնոլորտային ճնշման և ջերմաստիճանի տատանումների կոմպենսացման հնարավորությամբ:

Բոցա-իոնային դետեկտոր (FID)`

- Բոցա-իոնային դետեկտորը գրանցում է օրգանական միացումների մեծամասնությունը:

- Վերարտադրողականությունը $< \pm 0.05$ psi
- Ջերմաստիճանային գործակիցը - $< \pm 0.001$ psi/°C
- Ճնշման շեղման տիրույթ - $< \pm 0.1$ psi/6 ամսում
- Դետեկտորների ճշտությունը $< \pm 3$ մլ/րոպե կամ 7%, վերարտադրողականությունը $<$

$\pm 0.35\%$

- Հոսքի ճշտություն կախված կրող գազից - $< \pm 5\%$
 - Հոսքի վերարտադրողականությունը - $< \pm 0.35\%$
